ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆԻ

ՏԱԼԻԲԱՆԻ ԳՈՐԾՈՆՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ
Արաքս Ասատուրի Փաշայան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր
Արշակ Պողոսի Փոլադյան

պ.գ.թ. **Մուշեղ Հայկազնի Ղահրիյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Պետական Համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2025թ. դեկտեմբերի 1-ին, ժամը 13:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2025թ. հոկտեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

20-րդ դարում խորհրդաֆղանական հակամարտությունից (1979-1989 թթ.) հետո Աֆղանստանը հայտնվեց շարունակական անկայունության իրավիճակում՝ խարխլված պետական և հասարակական համակարգով: Հետպատերազմական աղճատված իրողությունների և քաղաքական վակուումի պայմաններում ի հայտ եկան ալ-Կաիդայի հետ փոխկապակցված ռազմաքաղաքական մի շարք խմբավորումներ, որոնք ամեն կերպ ձգտում էին հասնել իշխանության: Այդ խմբերից մեկը Տալիբանն էր, որը 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին դարձավ ոչ միայն ներաֆղանական, այլև տարածաշրջանային և միջազգային քաղաքականության ամենաազդեցիկ դերակատարներից մեկը: Շարժումն առանձնանում էր նաև կրոնական ուղղվածությամբ և ծայրահեղական գաղափարներով, որի առանցքում Արևմուտքի դեմ անտագոնիստական մոտեցումն էր:

Տալիբանի իշխանության առաջին շրջանում (1996-2001թթ.) Աֆղանստանը վերածվել էր ահաբեկչական խմբավորումների միջազգային հաբի: 2001 թ. սեպտեմբերի 11-ի Նյու Յորքի ահաբեկչական գործողությունների իրականացման մեղավոր համարելով ալ-Կաիդային, ինչպես նաև Տալիբանին, որը հրաժարվում էր հանձնել Ուսամա բին Լադենին, ԱՄՆ-ը ներխուժեց Աֆղանստան: Տալիբանի դեմ պայքարը, որը սկսվեց որպես հակաահաբեկչական գործողություն, հետագայում վերածվեց երկարատև, բազմակողմ և բարդ հակամարտության, որը ներառում էր ոչ միայն ռազմական, այլև դիվանագիտական, տնտեսական և գաղափարական բաղադրիչներ: Աֆղանստանը դարձավ ԱՄՆ-ի հակաահաբեկչական պայքարի առաջնային հարթակ, որտեղ վարչակարգի տապալումից հետո տեղաբաշխվեցին ԱՄՆ ռազմական ուժեր, ներդրվեց պետականաշինության նոր նախագիծ:

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության թեման ունի գիտական ու քաղաքական արդի և կարևոր նշանակություն, որը կապված է ինչպես միջազգային անվտանգության, այնպես էլ՝ տարածաշրջանային կայունության հետ: Սառը պատերազմի ավարտից հետո Միացյալ Նահանգները վերաձևակերպեց իր գերակայության և բացառիկության քաղաքականությունը՝ ձգտելով հաստատել միջազգային կարգի նոր մոդել հիմնված ժողովրդավարական արժեքների, շուկայական տնտեսության և միջազգային իրավունքի սկզբունքների վրա: Սակայն

այս ռազմավարությունը բախվեց լուրջ մարտահրավերների 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումներից հետո, ինչն արմատապես փոխեց ոչ միայն ԱՄՆ-ի, այլև ողջ միջազգային համակարգի անվտանգային առաջնահերթությունները: Տալիբանը, որն Աֆղանստանում իշխանության եկավ 1996թ.-ին և սկզբում ընկալվում էր որպես համեմատաբար չեզոք ուժ ԱՄՆ-ի կողմից, արագորեն դարձավ «ահաբեկչության դեմ գլոբալ պատերազմի» հիմնական թիրախը՝ ալ-Կաիդայի հետ սերտ կապերի և աջակցման պատճառով: Սա ստիպեց Վաշինգտոնին վերանայել իր ռազմավարական մոտեցումները՝ ընդգծելով ուժի և ռազմական միջամտության առաջնահերթությունները տարածաշրջանում: Միևնույն ժամանակ, ամերիկյան քաղաքականությունը Աֆղանստանում զարգացավ ոչ միայն ռեալիստական ուղղությամբ, այլև իդեալիստական նպատակներով՝ ուղղված ժողովրդավարական ինստիտուտների ձևավորմանը և պետականաշինության խթանմանը: Սակայն այս փորձերը, հիմնված լինելով ժողովրդավարության միջոցով ազդեցության ընդլայնման գաղափարի վրա, հիմնականում ձախողվեցին՝ բացահայտելով «պետականաշինության» սահմանափակ արդյունավետությունը մի պետությունում, որը չուներ ամուր քաղաքական ինստիտուտներ և կենտրոնական իշխանության կայուն ավանդույթներ:

Ատենախոսությունը թույլ է տալիս բացահայտել ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ գաղափարական դոկտրինների և ռեալ-պոլիտիկ մոտեցումների միջև առկա հակասությունները: Ամերիկյան քաղաքականությունը Տալիբանի նկատմամբ մի հետաքրքիր պատում է, առանց որի ուսումնասիրության անհնար է պատկերացում կազմել միջազգային ահաբեկչության հարցում ամերիկյան մոտեցումների, դրանց հաջող ու անհաջող կողմերի, անվտանգային ու գլոբալ հարցերի լուծման մեխանիզմների և առհասարակ Մերձավոր Արևելքի, առաջին հերթին Աֆղանստանի նկատմամբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության փոփոխական բնույթի մասին: Խնդրի ուսումնասիրությունը շատ կարևոր է, քանի որ, չնայած Աֆղանստանում ամերիկյան քաղաքականության շուրջ մեծաքանակ գրականության առկայությանը, 1996-2021թթ. ընթացքում տարբեր վարչակազմերի (Քլինթոնից մինչև Բայդեն) կողմից իրականացված քաղաքականության համապարփակ և համեմատական վերլուծությունը բացակայում է: Այս վերլուծությունը պետք է ներառի ինչպես քաղաքական դոկտրինները, այնպես էլ ռազմավարական առաջնահերթությունները, ինչպես նաև ներքին ու արտաքին գործոնների

ազդեցությունը ԱՄՆ-ի որոշումների վրա: Աշխատանքն ընդգրկում է այս լայն ժամանակահատվածը՝ օգտագործելով արխիվային փաստաթղթեր և պաշտոնական ռազմավարական նյութեր, ինչը թույլ է տալիս ուսումնասիրել քաղաքական ռեալիզմի, լիբերալիզմի և նեոպահպանողականության տեսությունների կիրառումը ամերիկյան քաղաքականությունում: Սա հնարավորություն է տալիս բացահայտել ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության զարգացումը, օրինաչափությունները և ներքին տրամաբանությունը, ինչպես նաև լրացնել ներկայիս գիտական դիսկուրսում առկա բացերը:

2021թ. ամերիկյան զորքերի դուրսբերումը Աֆղանստանից և Տալիբանի իշխանության վերականգնումը կրկին ցույց տվեցին, որ այս շարժումն ունի էական ազդեցություն ոչ միայն տարածաշրջանային, այլև գլոբալ անվտանգության և քաղաքականության վրա: Այս հանգամանքները դարձնում են թեման առանձնապես կարևոր ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային անվտանգության ուսումնասիրության համար՝ ընդգծելով ԱՄՆ-ի գլոբալ ռազմավարության փոփոխական բնույթը: Այս իրադարձությունները նաև ցույց տվեցին, որ նույնիսկ ամենամեծ ռազմական և տնտեսական գերիշխանությամբ տերությունները կարող են բախվել լուրջ մարտահրավերների, երբ գործում են խորը մշակութային, քաղաքական և սոցիալական տարբերություններով պայմանավորված միջավայրերում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել մի կողմից ԱՄՆ-Տալիբան հարաբերությունների դինամիկան ամերիկյան տեսանկյունից, մյուս կողմից՝ Տալիբան շարժման զարգացումը և ներազդեցությունը ամերիկյան արտաքին քաղաքականության վրա 1996-2021 թթ. շրջանում: Աշխատանքի նպատակն է՝ ամերիկյան խորապատկերի մեջ հետազոտել տարբեր վարչակազմերի քաղաքականությունը Տալիբանի նկատմամբ՝ հաշվի առնելով նեոպահպանողական և ռեալիստական մոտեցումները:

Ըստ այդմ, ձևակերպվել են հետևյալ խնդիրները.

1. Վերլուծել Տալիբան շարժման սոցիալական, տնտեսական, գաղափարական հիմքերը, ինչպես նաև շարժման ձևավորումն ու գործունեությունը պատմական, մշակութային և կրոնական տեսանկյունից՝ որպես Աֆղանստանում և հարակից տարածաշրջաններում հիմնական քաղաքական դերակատար և միջազգային հարաբերությունների կարևորագույն գործոն:

2. Ուսումնասիրել ԱՄՆ վարչակազմերի (Բ. Քլինթոն, Ջ. Բուշ Կրտսեր, Բ. Օբամա, Դ. Թրամփ և Ջ. Բայդեն) քաղաքականությունը Տալիբանի նկատմամբ տարբեր ժամանակաշրջաններում՝ վեր հանելով ընդունված դիվանագիտական, քաղաքական, ռազմական և տնտեսական որոշումների առանձնահատկությունները:

3. Դիտարկել և վերլուծել աֆղանական թղթածրարի, այդ թվում՝ Տալիբանի հարցում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նեոպահպանողական և ռեալիստների մոտեցումների հակասություններն ու ընդհանրությունները:

4. Նոր լույսի ներքո քննարկել Տալիբանի գործոնը ամերիկյան հակաահաբեկչական ռազմավարությունում, հատկապես «ահաբեկչության դեմ պատերազմի» օրակարգում ըստ ամերիկյան պաշտոնական փաստաթղթերի:

5. Ուսումնասիրել Դոհայի համաձայնագրի դերը ԱՄՆ-ի և Տալիբանի միջև զինադադարի հաստատման գործընթացում Աֆղանստանում և տարածաշրջանում խաղաղության հեռանկարի տեսանկյունից:

6. Վերլուծել ամերիկյան «ռեալիզմի» հաղթանակը 2021թ. Աֆղանստանից ամերիկյան ուժերի դուրսբերման հարցում՝ քննության ենթարկելով գործընթացի ռազմավարական, քաղաքական դրդապատճառներն ու իրավապայմանագրային հիմքերը:

7. Ուսումնասիրել Աֆղանստանի, այդ թվում՝ Տալիբանի հարցում ԱՄՆ քաղաքականության հաջողություններն ու ձախողումները՝ վեր հանելով դրանց պատճառները:

Հետազոտության ժամանակագրական սահմանները: Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է Տալիբան շարժման առաջին իշխանության շրջանը՝ 1996-ից մինչև 2021թ., երբ ԱՄՆ զինված ուժերը դուրս բերվեցին Աֆղանստանից, ինչով նշանավորվեց Տալիբանի վերադարձը իշխանության ղեկին: Սակայն կարևոր է նշել, որ Միացյալ Նահանգների տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները լիարժեքորեն հասկանալու համար ուսումնասիրության շրջանակում անդրադարձ է կատարվել նաև նախատալիբանյան շրջանին ևս, հատկապես Աֆղանստանի Ժողովրդական Հանրապետության (1978-1992) և քաղաքացիական պատերազմի փուլին՝ փորձ անելով բացահայտել այն նախադրյալներն ու դինամիկան, որոնք ձևավորել են ԱՄՆ-ի մոտեցումները ինչպես Աֆղանստանի ներքին հակասությունների, այնպես էլ Տալիբանի նկատմամբ:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ատենախոսությունը շարադրելիս կիրառվել են առաջնային (ելույթներ, ուղերձներ, հայտարարություններ, արտաքին քաղաքականությանը և ազգային անվտանգությանը վերաբերող փաստաթղթեր, տեսաձայնագրություններ, որոնք ուղղակիորեն առնչվում են հետազոտության խնդրո առարկային), երկրորդային (հետազոտության առարկային և խնդիրներին առնչվող հոդվածներ, մենագրություններ, վերլուծական աշխատանքներ, ԱՄՆ պատմությանը վերաբերող նյութերի և փաստաթղթերի ժողովածուներ, ատենախոսություններ) և երրորդային (հանրագիտարաններ, բառարաններ, որոնք կարող են դիտարկվել նաև որպես երկրորդային) աղբյուրներ: Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդաբանությամբ՝ համատեղելով պատմական քննության և քաղաքականության վերլուծության մեթոդները, որի շնորհիվ ԱՄՆ-ի՝ Տալիբանի նկատմամբ քաղաքականության համակողմանի ուսումնասիրություն է իրականացվել: Համեմատական-ժամանակագրական մեթոդով աշխատանքը վերլուծում է ԱՄՆ՝ միմյանց հաջորդած մի քանի վարչակարգերի քաղաքականության նմանությունները, տարբերությունները և փոփոխությունները:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության մեջ նոր լույսի ներքո ներկայացվում է Տալիբանի նկատմամբ ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության փոփոխությունների և կերպափոխումների վերլուծությունը՝ ռեալիստական տեսական մոտեցման համատեքստում: Վերլուծության ընթացքը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ի քաղաքականությունն աստիճանաբար փոխվել է՝ լիբերալ-գլոբալիստական մոտեցումներից անցնելով դեպի ռեալիստական ուժային քաղաքականության տրամաբանություն, ինչն ազդել է Աֆղանստանի նկատմամբ ամերիկյան արտաքին քաղաքականության դիսկուրսի և ռազմավարության զարգացման վրա:

Միանգամայն նոր շեշտադրումներով և գիտականորեն հիմնավորված կերպով ի ցույց է դրվում, որ Ջորջ Բուշ կրտսերի վարչակազմի աֆղանական քաղաքականությունը, ինչը նախկինում ներկայացվում էր որպես արտաքին քաղաքականության հեղափոխական շրջադարձ, իրականում եղել է վրիժառության և հետսառըպատերազմյան տարածաշրջանային ռազմավարական օրակարգերի շարունակականության հերթական փուլ: Նման դիտանկյունն առաջարկում է նոր մոտեցում՝ վերանայելով Բուշի վարչակազմի քաղաքականության ընկալումները միջազգային հարաբերությունների գիտական ընկալումներում:

Ատենախոսության մեջ առաջ քաշված նոր մոտեցումների տրամաբանության մեջ համակողմանիորեն վերլուծվում է 2020թ. Դոհայի համաձայնագիրը, որը դիտարկվում է ոչ միայն Աֆղանստանից ամերիկյան զորքերի դուրսբերման քաղաքական, դիվանագիտական և անվտանգային ուղենիշների հենքը, այլ ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության ընդհանուր ռազմավարության շրջանակը: Վերլուծության կենտրոնում ամերիկյան զորքերի դուրսբերման պատճառահետևանքային կապն է, որը բացահայտում է կարևոր գործոններ, ինչպիսիք են դիվանագիտական ձախողումները, քաղաքական սխալ հաշվարկները և ամերիկյան դիվանագիտության անկարողությունը՝ Աֆղանստանում ժողովրդավարության հաստատման և կայուն պետական կառույցների ձևավորման ուղղությամբ: Մեզանում առաջին անգամ ուսումնասիրվել է Տալիբանի հետ ԱՄՆ-ի բանակցությունների և Դոհայի պայմանագրի վերաբերյալ արձագանքներն ամերիկյան մամուլում: Ըստ այդմ, իրականացվել է քանակական և որակական ուսումնասիրություն: Բացի այդ, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել և ուսումնասիրվել վերջին տասնամյակում գաղտնազերծված մի շարք պաշտոնական փաստաթղթեր և դիվանագիտական հաղորդագրություններ, որոնք մինչ այժմ չեն դարձել գիտական ուսումնասիրության առարկա: Այս հանգամանքը հնարավորություն է տվել ընդլայնել աշխատանքի աղբյուրագիտական բազան:

Ատենախոսության գիտագործնական և կիրառական նշանակությունը: ԱՄՆ-ի աֆղանստանյան քաղաքականության փոխակերպումներին, այդ թվում Վաշինգտոն-Տալիբան հարաբերություններին նվիրված ներկա ուսումնասիրության վերջնարդյունքները կարող են օգտակար լինել ԱՄՆ-ի արտաքին հարաբերությունների, ինչպես նաև ասիական երկրների, մասնավորապես Աֆղանստանի մասնագետների, միջազգայնագետների, տարածաշրջանագետների ու արևելագետների համար: Աշխատանքի արդյունքները կարող են օգտակար լինել նաև ՀՀ արտաքին քաղաքականության մշակման, ինչպես նաև բարձրագույն կրթության և վերլուծական կենտրոնների ուսումնական և հետազոտական գործընթացում:

Ատենախոսության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժինը: Ատենախոսության փորձաքննությունն իրականացվել է հեղինակի՝

միջազգային գիտաժողովներում ունեցած մասնակցությամբ և թեմայի շուրջ ներկայացված զեկուցումներով, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից հավանության արժանացած գրախոսվող գիտական պարբերականներում և հրատարակություններում տպագրված հոդվածներով:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն: Ատենախոսությունը շարադրվել է հայերեն, անգլերեն, ռուսերեն՝ տարբեր աղբյուրների ու գրականության ուսումնասիրության և վերլուծության հիման վրա: Ըստ արծարծվող խնդիրների՝ օգտագործվել են ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականությանը, Աֆղանստանի պատմությանը, Տալիբանի գործունեությանը վերաբերող հոդվածներ, մենագրություններ, ատենախոսություններ, մամուլի հրապարակումներ[1], Սպիտակ տան աֆղանստանյան քաղաքականությանը, միջազգային ահաբեկչության դեմ պայքարին և Մերձավոր Արևելքում ժողովրդավարության խթանման վերաբերյալ ԱՄՆ նախագահների և բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներ և ուղերձներ[2], միջազգային

[1] Dixit A., The Afghan Civil War: Emergence of the Taliban as Power Broker, South Asian Survey, 2(1), pp. 111-118, 1995, https://doi.org/10.1177/097152319500200108 [հասանելի է 01.09.2025]; Farid N., Anjum T., Farid A., Islamic Socialism and Communist Socialism: A Review of Comparative Analytical Studies, Global Sociological Review IX, no. III 2024, pp. 35-44, https://doi.org/10.31703/gsr.2024(IX-III).04 [հասանելի է 01.09.2025]; Newell R.S., Revolution and Revolt in Afghanistan, The World Today, 35, no. 11, 1979, pp. 432-442, JSTOR, http://www.jstor.org/stable/40395085 [հասանելի է 01.09.2025]; Rubin M., Who Is Responsible for the Taliban, Middle East Review of International Affairs 6, no. 1, 2002, 16 p.

[2] Remarks by the President on a New Beginning, The White House, Office of the Press Secretary, 4 June 2009, https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/remarks-president-cairo-university-6-04-09 [հասանելի է 01.09.2025]; Remarks by the President in Address to the Nation on the Way Forward in Afghanistan and Pakistan, The White House, 1 December 2009, https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/remarks-president-address-nation-way-forward-afghanistan-and-pakistan [հասանելի է 01.09.2025]; Address to the Nation on the End of the Combat Mission in Iraq, The White House, 31 August 2010, https://www.presidency.ucsb.edu/documents/address-the-nation-the-end-combat-operations-iraq [հասանելի է 01.09.2025]; Osama bin Laden is Dead, The White House, 2 May 2011, https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2011/05/02/remarks-president-osama-bin-laden [հասանելի է 01.09.2025]; Remarks by the President on the Middle East and North Africa, The White House, Office of the Press Secretary, 19 May 2011, https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2011/05/19/remarks-president-middle-east-and-north-africa, [հասանելի է 01.09.2025]; Remarks by the President on the Way Forward in Afghanistan, The White House, Office of the Press Secretary, 22 June 2011, https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2011/06/22/remarks-president-way-forward-afghanistan [հասանելի է 01.09.2025]; Trump's speech on Afghanistan, CNN, 21 August 2017, https://edition.cnn.com/2017/08/21/politics/read-trump-speech [հասանելի է 01.09.2025].

կազմակերպությունների զեկույցներ ու բանաձևեր[3], Տալիբանի ու ալ-Կաիդայի գործիչների հայտարարություններ, ԱՄՆ-Տալիբան հարաբերությունների վերաբերյալ մեծ թվով արխիվային նյութեր, որոնց մեծ մասն ուսումնասիրվել և ներկայացվել է նոր լույսի ներքո, ինչպես նաև պատմաքաղաքական ուղղվածությամբ հայալեզու, ռուսալեզու, անգլալեզու հանդեսներ և պարբերականներ: Վերլուծության են ենթարկվել նաև ԱՄՆ ազգային անվտանգությանն առնչվող փաստաթղթեր[4]: Աշխատանքում օգտագործվել են ԱՄՆ-Տալիբան հարաբերությունների վերաբերյալ մեծ թվով արխիվային նյութեր և մասնագիտական գրականություն, որոնց մեծ մասը ուսումնասիրվել և ներկայացվել են նոր լույսի ներքո:

Ատենախոսության մեջ քննարկվող մի շարք հարցերի ուսումնասիրությանը, որոնցից են՝ ԱՄՆ-ի ներխուժումը Աֆղանստան, միջազգային իսլամական ծայրահեղականության զարգացումն ու դրա դեմ ԱՄՆ-ի պայքարը, ԱՄՆ մերձավորաևելյան քաղաքականությունը, մեծապես նպաստել են հայ արևելագետներ Նիկոլայ Հովհաննիսյանի[5] և Ռուբեն Կարապետյանի[6] աշխատությունները:

---

[3]Security Council Resolution 1267, S/RES/1267 (1999), New York: United Nations, 15 October 1999, https://undocs.org/S/RES/1267(1999) [հասանելի է 01.09.2025]; Security Council Resolution 1333, S/RES/1333 (2000), New York: United Nations, 19 December 2000, https://undocs.org/S/RES/1333(2000) [հասանելի է 01.09.2025]; Security Councill Resolution 1378, New York: United Nations, 14 November 2001, https://digitallibrary.un.org/record/454182 [հասանելի է 01.09.2025]; Security Council resolution 1386 (S/RES/1386), New York: United Nations, 20 December 2001, https://undocs.org/S/RES/1386(2001) [հասանելի է 01.09.2025].

[4]The White House, A National Security Strategy for a Global Age, Washington, December 2000, 84 p., https://history.defense.gov/Portals/70/Documents/nss/nss2000.pdf [հասանելի է 01.09.2025]; The White House, A National Security Strategy for a New Century, Washington, October 1998, 60 p, https://history.defense.gov/Portals/70/Documents/nss/nss1998.pdf?ver=zl1p-sltgDvX0M01YVnfqA%3d%3d [հասանելի է 01.09.2025]; The White House, A National Security Strategy of Engagement and Enlargement, Washington, 1995, 40 p., https://history.defense.gov/Portals/70/Documents/nss/nss1995.pdf%3Fver%3Dpzgo9pkDsWmlOqTYTC6O-O%3d%3d [հասանելի է 01.09.2025]; The White House, National Security Strategy of the United States. Washington, 1991, 30 p., https://nssarchive.us/wp-content/uploads/2020/04/1991.pdf [հասանելի է 01.09.2025]; The White House, National Security Strategy the United States, Washington, September 2002, 30 p., https://georgewbush-whitehouse.archives.gov/nsc/nss/2002/ [հասանելի է 01.09.2025]; The White House, A National Security Strategy, Washington, May 2010, 60 p., https://obamawhitehouse.archives.gov/sites/default/files/rss_viewer/national_security_strategy.pdf [հասանելի է 01.09.2025].

[5]Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն: Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005թթ., հատոր չորս, Երևան, Զանգակ-97, 2006 թ., 868 էջ:

[6]Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019 թ., 528 էջ:

Ատենախոսության մեջ լայնորեն ուսումնասիրվել են ամերիկյան զեկույցներ, որոնցից են՝ "Report on U.S. Policy toward Afghanistan and Pakistan"[7], "The 9/11 Commission Report: Final Report of the National Commission on Terrorist Attacks upon the United States"[8], "Afghanistan 2001--2021: U.S. Policy Lessons Learned"[9], "Afghanistan Report on Human Rights Practices for 1996"[10], ինչպես նաև Սենատում թեմային առնչվող լսումների վերաբերյալ նյութերը, օրինակ՝ "Senate armed services Committee Hearing"[11]: Բացի այդ, ընդգրկված են նաև սոցիալական հարցումներ պարունակող նյութեր, որոնք վեր են հանում տարբեր ժամանակահատվածներում ամերիկյան հասարակության վերաբերմունքը ռազմական միջամտությունների նկատմամբ: Այս հարցումները ցույց են տալիս հանրային կարծիքի փոփոխությունները, որոնք պայմանավորված են ինչպես տարածաշրջանային կոնֆլիկտներով, այնպես էլ արտաքին քաղաքականության ռազմավարական առաջնահերթություններով[12]:

Համապարփակ վերլուծության է ենթարկվում նաև Դոհայի համաձայնագիրը, որը ստորագրվել է 2020թ. փետրվարի 29-ին Կատարի մայրաքաղաք Դոհայում ԱՄՆ-Տալիբան բանակցությունների արդյունքում, որը կարևոր քայլ է Աֆղանստանում

---

[7]The White House, Office of the Interagency Policy Group's Report on U.S. Policy toward Afghanistan and Pakistan, 27 March 2009, https://www.centcom.mil/MEDIA/PRESS-RELEASES/Press-Release-View/Article/903723/white-paper-of-the-interagency-policy-groups-report-on-us-policy-toward-afghani/ [հասանելի է 01.09.2025].

[8]National Commission on Terrorist Attacks, The 9/11 Commission Report: Final Report of the National Commission on Terrorist Attacks upon the United States. New York: Norton, 2004, pp. 327-335, 353, https://911commission.gov/report/911Report.pdf [հասանելի է 01.09.2025].

[9]U.S. Senate Committee on Foreign Relations, Afghanistan 2001-2021: U.S. Policy Lessons Learned, Washington, U.S. Government Printing Office, 17 November 2021, pp. 3-12, https://www.foreign.senate.gov/imo/media/doc/11%2017%2021%20Afghanistan%202001-2021%20-%20U.S.%20Policy%20Lessons%20Learned1.pdf [հասանելի է 01.09.2025].

[10]U.S. Department of State, Afghanistan Report on Human Rights Practices for 1996, the Bureau of Democracy, Human Rights, and Labor, 30 January 1997, https://1997-2001.state.gov/global/human_rights/1996_hrp_report/afghanis.html [հասանելի է 01.09.2025].

[11]Senate armed services Committee Hearing, Transcript, September 2021, https://www.armed-services.senate.gov/hearings/to-receive-testimony-on-the-conclusion-of-military-operations-in-afghanistan-and-plans-for-future-counterterrorism-operations [հասանելի է 01.09.2025].

[12]Newport F., American Public Opinion and the Afghanistan Situation, Gallup, 27 August 2021, https://news.gallup.com/opinion/polling-matters/354182/american-public-opinion-afghanistan-situation.aspx [հասանելի է 01.09.2025]; Jones J., Americans Split on Whether goals in Afghanistan will be met, 4 December 2009, https://news.gallup.com/poll/124565/Americans-Split-Whether-Goals-Afghanistan-Met.aspx [հասանելի է 01.09.2025]; Terrorism: The War in Afghanistan and CIA, Interrogations CBS news Poll, 1 September 2009. 2009 Afganistan poll conducted by ABC/BBC, http://news.bbc.co.uk/2/shared/bsp/hi/pdfs/05_02_09afghan_poll_2009.pdf [հասանելի է 01.09.2025];

գրեթե երկու տասնամյակ տևած պատերազմի ավարտի ճանապարհին[13]: Կարելի է առանձնացնել Ուսամա բին Լադենի կողմից ջիհադի հայտարարման տեքստերը[14]: Ամերիկյան քաղաքականության, ինչպես նաև Աֆղանստանում տեղի ունեցող իրավիճակի ուսումնասիրության համար շահեկան են եղել ինչպես արտաքին գերատեսչական, այնպես էլ անվտանգային մարմինների տարեկան հաշվետվություններն ու զեկույցները[15]:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 171 էջ:

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, հետազոտության գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական շրջանակը, ներկայացվում են աշխատության փորձաքննությունը և պաշտոնական

---

[13] Agreement for Bringing Peace to Afghanistan between the Islamic Emirate of Afghanistan which is not recognized by the United States as a state and is known as the Taliban and the United States of America, 29 February 2020, https://www.state.gov/wp-content/uploads/2020/02/Agreement-For-Bringing-Peace-to-Afghanistan-02.29.20.pdf [հասանելի է 01.09.2025].

[14] Bin laden O., Message from Usama bin Laden to his Muslim Brothers in the Whole World and Especially in the Arabian Peninsula: Declaration of Jihad Against the Americans Occupying the Land of the Two Holy Mosques; Expel the Heretics from the Arabian Peninsula, Al-Quds al-Arab, 1996, https://ctc.westpoint.edu/wp-content/uploads/2013/10/Declaration-of-Jihad-against-the-Americans-Occupying-the-Land-of-the-Two-Holiest-Sites-Translation.pdf [հասանելի է 01.09.2025]; Bin Laden O., Jihad against Jews and Crusaders: World Islamic Front statement, 23 February 1998, https://www.911memorial.org/sites/default/files/inline-files/1998%20Osama%20bin%20Laden%27s%201998%20Fatwa%20declaring%20war%20against%20the%20West%20and%20Israel_0.pdf [հասանելի է 01.09.2025].

[15] Popescu I. C., Adapting US Defense Strategy to Great-Power Competition, US army war college publications, 20 March 2025, https://publications.armywarcollege.edu/News/Display/Article/4129357/adapting-us-defense-strategy-to-great-power-competition/ [հասանելի է 01.09.2025]; United Nations Office on Drugs and Crime, Afghanistan opium survey 2006, 2006, https://reliefweb.int/report/afghanistan/afghanistan-opium-survey-2006 [հասանելի է 01.09.2025]; Human Rights Watch, Appendix B: Attacks on Afghan educational facilities in 2006. In The human cost: The consequences of insurgent attacks in Afghanistan, April 2007, pp. 40–45, https://www.hrw.org/reports/2007/afghanistan0407/afghanistan0407appendixb.pdf [հասանելի է 01.09.2025]; U.S. Department of State Afghanistan Report on Human Rights Practices for 1996, 30 January 1997, https://1997-2001.state.gov/global/human_rights/1996_hrp_report/afghanis.html [հասանելի է 01.09.2025]; The Costs of War, Carnegie report, 13 September 2023, https://www.carnegie.org/our-work/article/costs-war/ [հասանելի է 01.09.2025].

հավանությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է **«ԱՄՆ–Աֆղանստան հարաբերությունների պատմա-քաղաքական էվոլյուցիան և Տալիբանի ձևավորման գործընթացը 20-րդ դարի երկրորդ կեսին»** և ներկայացնում է ԱՄՆ-Աֆղանստան հարաբերությունների դինամիկան, ինչպես նաև Տալիբանի ձևավորումը սառըպատերազմյան տարածաշրջանային գործընթացների և քաղաքական ու գաղափարական հակասությունների համատեքստում: Առաջին ենթագլխում՝ «**ԱՄՆ–Աֆղանստան հարաբերությունների դինամիկան ներաֆղանական բարդ խճապատկերում**», քննության են առնվում և մեկնաբանվում Աֆղանստանի ձևավորման և զարգացման շրջանում պետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, առաջին փորձերը ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ձևավորման տեսանկյունից, ինչպես նաև դրանից բխող հիմնախնդիրները: Երկրորդ ենթագլխում՝ «**Տալիբանի ստեղծումը, գաղափարախոսությունն ու սոցիալական հենարանը**», ներկայացնում է Տալիբանի ձևավորումը, զարգացումը, հիմնական գաղափարախոսությունը, ինչպես նաև սոցիալական հենարանը աֆղանական հասարակության մեջ: Երրորդ ենթագլուխը՝ «**Տալիբանի իշխանության գալը Աֆղանստանում 1996թ. և համագործակցությունն ալ-Կաիդայի հետ»,** ներկայացվում է քաղաքացիական պատերազմի, ինչպես նաև Աֆղանստանի ներքաղաքական կյանքի փոխակերպումների պատճառով իսլամական տարբեր խմբավորումների, հատկապես՝ Տալիբանի ձևավորման գործընթացը, ազդեցության ընդլայնումը և համագործակցությունը ալ-Կաիդայի հետ:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«ԱՄՆ-ի քաղաքականությունը Աֆղանստանի նկատմամբ Տալիբանի և հետ-տալիբանյան շրջանում (1996-2008թթ.)»,** քննարկում է ամերիկյան քաղաքական մոտեցումների փոխոխությունները Տալիբանի իշխանության հաստատումից և հակաահաբեկչական պայքարից հետո: Այն կազմված է երեք ենթագլխից: **«Տալիբանի իշխանության ճանաչման հիմնախնդիրը ԱՄՆ արտաքին քաղաքականության օրակարգում (1996-2001թթ.)»** խորագրով առաջին ենթագլխում ներկայացվում են ամերիկյան քաղաքականության հիմնական դրսևորումները Բիլ Քլինթոնի կառավարման շրջանում: Երկրորդ ենթագլուխը՝ «**Տալիբանը ահաբեկչության դեմ ԱՄՆ գլոբալ պայքարի թիրախում**», լուսաբանում է Տալիբանի և ալ-Կաիդայի դեմ պայքարում

Բուշի ամերիկյան քաղաքականության վերաձևակերպումը, ինչպես նաև ահաբեկչության դեմ պայքարի ամերիկյան քաղաքականության կիրառումն Աֆղանստանում: «**Աֆղանստանում պետական համակարգի արդիականացման գործընթացը և պայքարը Տալիբանի դեմ Ջորջ Բուշ Կրտսերի օրոք (2001-2008թթ.)»** վերնագրով երրորդ ենթագլխում ուսումնասիրվում են Աֆղանստանում իշխող նոր ուժի ձևավորման, այնտեղ ՆԱՏՕ-ի համընդհանուր խաղաղապահ համակազմի ներդրման, ինչպես նաև Բուշ կրտսերի նախագահության տարիներին Տալիբանի նկատմամբ ամերիկյան հակաահաբեկչական քաղաքականության իրականացմանն առնչվող հարցեր:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է **«Աֆղանստանը ԱՄՆ արտաքին քաղաքականության առաջնահերթությունների ու ներգրավման մեխանիզմների համատեքստում (2009-2016թթ.)»** և ունի երեք գլուխ: Առաջին ենթագլուխը վերնագրված է «**Աֆղանստանը Օբամայի արտաքին քաղաքական առաջնահերթությունների օրակարգում»,** և ներկայացնում է 2008թ. նախագահական ընտրություններից հետո Բարաք Օբամայի հաղթանակը, ինչպես նաև ամերիկյան քաղաքականության վերանայումներն Աֆղանստանում: **«ԱՄՆ-ի քաղաքականությունը Աֆղանստանում՝ լիբերալիզմի և ռեալիզմի խաչմերուկում»** վերնագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է Օբամայի աֆղանստանյան քաղաքականության ռեալիստական և լիբերալ մոտեցումների համադրությունը և ազդեցությունը աֆղանական հակամարտությունում: Երրորդ ենթագլուխը՝ վերնագրված **«Տալիբանի վերադարձը ռազմա-քաղաքական ընդդիմության դաշտ. ԱՄՆ-ի քաղաքականության ձախողումները»,** ուսումնասիրում է Տալիբանի վերակազմավորումը, ինչպես ռազմական, այնպես էլ՝ քաղաքական առումով և նրա դիրքավորումը որպես հիմնական այլընտրանք աֆղանական գործող իշխանություններին:

Ատենախոսության չորրորդ գլուխը, որ վերնագրված է **«ԱՄՆ քաղաքականությունը Աֆղանստանի հարցում (2016-2021թթ.) և Դոհայի համաձայնագիրը (2020թ.) (Դ. Թրամփի և Ջ. Բայդենի վարչակարգերի քաղաքականության համեմատական վերլուծություն)»,** ներկայացնում է Վաշինգտոնի դիվանագիտական նախաձեռնություններից անցումը դեպի Աֆղանստանից փուլային դուրսբերման քաղաքականություն՝ ամրագրելով ռեալիստական մոտեցումների գերակայությունը ԱՄՆ-ի արտաքին

քաղաքականության մեջ: Այն կազմված է երեք ենթագլխից: Առաջին ենթագլուխը՝ վերնագրված **«ԱՄՆ-Տալիբան խաղաղության գործընթացը (2016-2020թթ.)»,** ներկայացնում է ԱՄՆ-Տալիբան հարաբերությունները Թրամփի կառավարման շրջանում, ինչպես նաև բանակցությունների վերաբերյալ ամերիկյան մամուլի արձագանքը: Երկրորդ ենթագլուխը՝ վերնագրված **«Դոհայի համաձայնագիրը՝ ԱՄՆ արտաքին քաղաքականության տեսանկյունից»,** ներկայացնում է ԱՄՆ-ի և Տալիբանի միջև ստորագրված Դոհայի համաձայնագիրը, որն էլ ազդարարում է ամերիկյան ներկայության ավարտը: **«Աֆղանստանում ԱՄՆ-ի 20-ամյա ներգրավվածության ավարտը (2021թ)»** վերնագրով երրորդ ենթագլխում ուսումնասիրվում են Բայդենի քաղաքական որոշումները Աֆղանստանից ամերիկյան զորքերը դուրս բերելու ուղղությամբ, ինչպես նաև նույն Բաղենի օրոք ոչ համակարգված զորքերի դուրսբերման հետևանքներն Աֆղանստանի և Տալիբանի հետվերադարձի հարցում:

Եզրակացության մեջ ամփոփված են ատենախոսության հիմնական արդյունքները: Ըստ այդմ՝

- 2001թ.-ից հետո Աֆղանստանում «անվերջ պատերազմի» թեզը ԱՄՆ-ում ծառայել է թշնամու կերպարի ձևավորմանը՝ արժենալով հսկայածավալ ծախսեր, ինչը շարունակում է մնալ չիմնավորված իր թիրախային նպատակների իրագործման տեսանկյունից՝ հաշվի առնելով, որ իշխանությունը փոխանցվեց ամերիկյան ընկալումներով՝ ահաբեկչական ուժի: 2011 թ. սկիզբ առած «արաբական գարնան» գործընթացները, իսկ հետագայում Ուկրաինայի ճգնաժամը և Չինաստանի աճող ազդեցությունն արմատապես վերաձևակերպեցին ԱՄՆ-ի արտաքին քաղաքական առաջնահերթությունները: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ը իրավացիորեն չէր կարող պահպանել իր ներկայությունն Աֆղանստանում առանց լրացուցիչ ռեսուրսների ներդրման և հսկայական ծախսերի: Մինչդեռ չունենալով հստակ ռազմավարական նպատակներ և ի զորու չլինելով հաղթահարել չհաղթահարվող ու շարունակական ճգնաժամը, ԱՄՆ-ը այլևս չէր կարող հիմնավորել այդ ուղղությամբ իրականացվող ծախսերը և այլևայլ ռեսուրսների ներդրումը:
- Աֆղանստանում ԱՄՆ-ը տարբեր ծրագրեր փորձարկեց և տարբեր մոդելներ ներդրեց, մի դեպքում՝ ջիհադական՝ Սառը պատերազմի տարիներին, որն էապես հաջողեց, քանի որ սկիզբ դրեց Տալիբան շարժմանը: Մինչդեռ 2001 թ. Աֆղանստանում աշխարհիկ ու կենսունակ պետություն կառուցելու նախագիծը լիովին

ձախողվեց, ինչը ուղիղ կապ ուներ նաև Համիդ Քարզայի և Աշրաֆ Ղանիի ապաշնորհ ներքին քաղաքականության և դրա արդյունքում ձևավորված հասարակության հիասթափության հետ, որին հակադրվեցին սոցիալական արդարության և իրավական պետություն ստեղծելու Տալիբանի հաղթող թեզերն ու ռազմական հաջողությունները:

- Ամերիկյան քաղաքականության կերպափոխումներն Աֆղանստանում ավելի քան քառորդ դարում ի ցույց դրեցին ամերիկյան միաբևեռ հեգեմոնիայի բացասական հետևանքները, ինչը կապված էր նաև սեփական ուժերի և արժեքների գերագնահատման և մի շարք ուղղություններում, ինչպես, օրինակ, Աֆղանստանում, չհաշվարկված կամ խրթին ռազմավարություններով առաջնորդվելը: Ջորջ Բուշ Կրտսերի «ուժի կիրառումից» անցումը Բարաք Օբամայի «պատերազմի վերաիմաստավորմանը», ապա Դոնալդ Թրամփի օրոք՝ Տալիբանի լեգիտիմացմանը և, վերջապես, Ջո Բայդենի ամբողջական հեռացմանը, վկայում է, որ Միացյալ Նահանգները չկարողացավ ավարտին հասցնել այն ծրագիրը, որը հանրահռչակեց 2001թ.՝ ապահովելու թիրախային պայքար ահաբեկչության դեմ Աֆղանստանում քաղաքացիական պետության ձևավորման համատեքստում: Արդյունքում, Աֆղանստանի խնդիրը վերածվեց ոչ թե ամերիկյան ուժի հաստատման հարթակի կամ հաջողության պատմության, այլ՝ հակառակը, բացահայտեց ԱՄՆ արտաքին քաղաքականության հակասությունները, ռազմավարական անհետևողականությունն ու ձախողումները աֆղանստանյան օրինակով: Այս պարագայում, ԱՄՆ-ի քաղաքականությունը նույնական աղերսներ ունի Աֆղանստանում ԽՍՀՄ-ի ձախողված քաղաքականության հետ:
- Աֆղանստանը երբևէ չդարձավ ամերիկյան արտաքին քաղաքականության ինքնուրույն ռազմավարական առանցք, այլ մշտապես դիտարկվեց որպես ավելի լայն աշխարհաքաղաքական ծրագրերի բաղադրիչ: Տալիբանը, լինելով ոչ միայն տեղական մարտահրավեր, այլև տարածաշրջանային ու քաղաքական ազդեցության գործոն, սահմանափակեց ԱՄՆ նախաձեռնությունների իրականացման արդյունավետությունը: Տալիբանին իշխանությունը փոխանցելու ԱՄՆ անսպասելի որոշումն էականորեն խարխլեց այն պատկերացումը, ըստ որի Միացյալ Նահանգները հանդես էր գալիս որպես «գլոբալ անվտանգության առաջամարտիկ»: Աֆղանստանին վերաբերող մեկ այլ նախաձեռնություն՝ կապված պետականաշինության ծրագրի հետ, ոչ թե նախապես ու համակողմանի մշակվել էր,

այլ ներդրվել էր իրավիճակային պայմանների ազդեցությամբ, նույնպես չկայացավ: Այն ձախողված էր ի սկզբանե, քանի որ այն հիմնված չէր տվյալ երկրի ներքին քաղաքական, սոցիալական և մշակութային առանձնահատկություններին համարժեք մոտեցումների վրա, այլ ներկայացնում էր պարտադրված մոդել՝ առանց կայուն լեգիտիմության հիմքի:

- Աֆղանստանի փորձը ցույց տվեց, որ նեոպահպանողական, լիբերալ և ռեալիստական մոտեցումներն ունեն սահմանափակ արդյունավետություն: Դրանցից ոչ մեկը չի կարողացել ապահովել կայուն և կանխատեսելի արդյունք: Ասիմետրիկ հակամարտությունների պարագայում պարզ դարձավ, որ ուժի կիրառման, ինստիտուցիոնալ կառուցման կամ ուժերի հավասարակշռության քաղաքական հաշվարկները չեն կարող լինել բավարար, եթե չլինի ներքին լեգիտիմություն և տվյալ տարածաշրջանին բնորոշ սոցիալ-մշակութային իրավիճակի լիակատար ըմբռնում:
- Աֆղանստանի ճգնաժամը ժամանակի ընթացքում վերածվեց ոչ միայն արտաքին քաղաքական ու անվտանգային խնդրի, այլև ամերիկյան ներքաղաքական դիսկուրսի կարևոր բաղկացուցչի: Արդյունքում, ահաբեկչության դեմ անխուսափելի ու անմնացորդ պայքարի վերաբերյալ հասարակության մեջ ձևավորվեց կարծրատիպային մտածողություն. անտեսվեց պատերազմի ռազմավարական խորքն ու դրա հետևանքները: Էլիտաների համար երկար ժամանակ դժվարություն առաջացավ շրջանցել հասարակական կարծիքը, որի ձևավորման պատասխանատուն հենց իրենք էին:
- Մյուս կողմից, քննարկվող խնդրի խորապատկերի մաս է Տալիբանի ֆենոմենը, որն աչքի է ընկնում ոչ միայն ռազմական և քաղաքական բաղադրիչներով այլև սոցիալական ու գաղափարական տարրերի բարդ փոխազդեցությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Մաթևոսյան Հ., ԱՄՆ-Տալիբան հարաբերությունների բարդ դինամիկան 1996-2001 թթ., Տարածաշրջան և աշխարհ, 2024, № 4 (53), էջ 28-33:
2. Մաթևոսյան Հ., Միրաքյան Ռ., Ուսամա բեն Լադենի կողմից ջիհադի հայտարարումը ընդդեմ ամերիկացիների, Արևելագիտության հարցեր 16, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019, էջ 35-47:
3. Մաթևոսյան Հ., Ամերիկյան զորքերի դուրսբերումը և Տալիբանի վերադարձը իշխանության Աֆղանստանում, ՎՊՀ Գիտական տեղեկագիր, Հումանիտար և հասարակական գիտությունների 1, 2025, էջ 144-150:
4. Մաթևոսյան Հ., Դոհայի համաձայնագիրը որպես ԱՄՆ ռազմավարական շահերի ապահովման ուղի Աֆղանստանում, Տարածաշրջան և աշխարհ, XVI (1 (56)), 2025, էջ 27-32:
5. Մաթևոսյան Հ., ԱՄՆ հատուկ ծառայությունների գործողությունները «ալ-Կաիդայի»-ի նկատմամբ 2001 սեպտեմբերից մինչև 2002 թթ., Արևելագիտության հարցեր 17, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020, էջ 50-58:
6. Մաթևոսյան Հ., Դոհայի համաձայնագիրը ԱՄՆ–Աֆղանստան հարաբերություններում նոր շրջափուլի թևակոխման սկիզբ, Տարածաշրջան և աշխարհ, XV (5 (54), 2024, էջ 39-44:
7. Մաթևոսյան Հ., Թալիբանի ձևավորման հայեցակարգային հիմքերը. Իսլամական արմատականության նոր մոդել, Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, no. 2, 2024, էջ 89-97:
8. Մաթևոսյան Հ., ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ուղղությունների փոփոխությունը ծայրահեղականության դեմ պայքարում («ալ-Կաիդա»-ի օրինակով), Արևելագիտության հարցեր 20, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, էջ 30-39:
9. Մաթևոսյան Հ., Տալիբանի իշխանազրկումը «Ահաբեկչության դեմ պատերազմի» ամերիկյան քաղաքականության համատեքստում, ՇՊՀ Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, հ.2, 2024, էջ 245-255:

MATEVOSYAN HARUTYUN ARMEN

THE TALIBAN FACTOR IN AMERICAN FOREIGN POLICY

The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Candidate of Historical Sciences in the field of "World History" 07.00.02.

The defense of the dissertation will take place on December 1, 2025, at 13:00 at the meeting of the HESC Specialized Council 006 at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

SUMMARY

After the Soviet–Afghan War wrapped up in 1989, Afghanistan plunged into a long period of chaos, with state institutions crumbling and society becoming deeply fragmented. This political vacuum and economic turmoil paved the way for various political and religious movements to rise, many of which had ties to al-Qaeda. Among these groups, the Taliban quickly established itself as a major player in both local and regional politics, known for its radical Islamist beliefs, strong anti-Western views, and dependence on support from regional and international intelligence agencies.

Following the September 11 attacks in 2001, the Taliban and al-Qaeda became notorious symbols of terrorism on a global scale. What started as a limited U.S. counterterrorism effort transformed into a lengthy and complex war that encompassed military, political, and ideological aspects. Afghanistan became the focal point of the U.S. "Global War on Terror," characterized by the ousting of the Taliban regime and extensive nation-building efforts. However, this experience ultimately highlighted the challenges of foreign intervention and the intricate nature of achieving lasting stability through military force and external reconstruction. The dissertation paper consists of Introduction, four Chapters, Conclusion, and References. The Introduction justifies the topic of the dissertation paper and represents the scientific novelty of the research, theoretical-methodological foreground, as well as reviews of the sources included in the paper.

The first chapter dives into the historical and political journey of U.S.–Afghanistan relations during the latter half of the twentieth century, all set against the backdrop of the Cold War.

Moving on to the second chapter, the focus shifts to U.S. policy regarding Afghanistan during the Taliban era and the years that followed (1996–2008). This section examines how American foreign policy evolved from the diplomatic efforts of the Clinton administration to the counterterrorism strategies implemented under President Bush. It highlights the efforts to rebuild Afghan state institutions, NATO's role, and the complex battle against the Taliban.

In the third chapter, we explore U.S. foreign policy goals and engagement strategies in Afghanistan from 2009 to 2016. It discusses how the Obama administration recalibrated its approach, trying to strike a balance between liberal ideals and realist tactics, while also shedding light on how the Taliban reorganized itself into a formidable military and political entity that could challenge the Afghan state established after 2001.

The fourth chapter offers a comparative look at the policies of the Trump and Biden administrations toward Afghanistan (2016–2021), with a particular emphasis on the peace talks that led to the 2020 Doha Agreement. This part interprets the agreement as both a significant symbolic gesture and a strategic turning point, marking the conclusion of America's two-decade involvement in Afghanistan, while also highlighting the challenges of achieving lasting peace through external intervention.

The Conclusion sums up the main results of the research undertaken within the frames of our dissertation paper.

МАТЕВОСЯН АРУТЮН АРМЕНОВИЧ

ФАКТОР ТАЛИБАНА В АМЕРИКАНСКОЙ ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - "Всемирная история".

Защита состоится 1 декабря 2025 года, в 13:00 на заседании специализированного совета 006 "Всемирная история" КВОН РА действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

После окончания советско-афганской войны в 1989 году Афганистан погрузился в хаос с разрушением государственных институтов и глубокой социальной фрагментацией. Политический вакуум и экономический кризис способствовали появлению различных политико-религиозных движений, среди которых Талибан быстро стал ключевым игроком благодаря радикально-исламистской идеологии, антизападной позиции и поддержке региональных и международных структур.

После терактов 11 сентября 2001 года Талибан и «Аль-Каида» стали символами международного терроризма. Первоначально ограниченная антитеррористическая операция США превратилась в затяжной конфликт с военными, политическими, экономическими и идеологическими аспектами, показав трудности внешнего вмешательства и сложность достижения устойчивой стабильности через военную силу и внешнее строительство институтов.

Диссертация состоит из введения, четырёх глав и заключения.

Введение раскрывает актуальность темы, научную новизну, теоретико-методологическую базу и используемые источники.

Первая глава рассматривает историко-политическое развитие отношений США и Афганистана во второй половине XX века.

Вторая глава посвящена политике США в период правления Талибана и постталибанские годы (1996–2008 гг.), включая дипломатические усилия, антитеррористические стратегии, восстановление афганских государственных институтов и роль НАТО.

Третья глава исследует цели и механизмы вовлечения США в Афганистан в 2009–2016 гг., баланс между либеральными идеалами и реалистическим подходом, а также реорганизацию Талибана в мощную военную и политическую силу.

Четвёртая глава представляет сравнительный анализ политики администраций Трампа и Байдена (2016–2021 гг.), с акцентом на мирные переговоры, приведшие к Дохинскому соглашению 2020 года, символическому завершению двадцатилетнего присутствия США в Афганистане.

Заключение подводит итоги исследования и обобщает основные результаты работы.